

տը, Գրիգոր տարիաւազը ևւ Մարգո Անդոնիս (— Սուլթանշահին ևւրպակեան անունն է) որդի Արգարու), որուն հայրը գրեթէ այս գործը: Գր-
րիգոր տարիաւազը աւելի աղագրութեան համար
կը զրկենք և ձեր խնամքին կը յանձնենք զա-
նունքս:

Սիգոնի եղբւր, նոր տամարի մասին ալ խո-
սեցաւ մեզի, բայց մենք չենք կրնար խախտել
մերինը այլազգիներէն յառաջ, եթէ փոխենք,
այդ անտրեւններ կը բանեն մեզ՝ բնւոյ թէ Գր-
բանկներուն հետ միացիք էք: Առի՛կ զատ մենք
գրիգոր այ չաւելինք որ խօսին մեզի այս տամա-
րի մասին, ասոր համար Յովհաննէս վրզը, մեր
կողմէն փոխանորդ ըրինք որ այս տամարի վե-
րաբերեալ բաներն ալ սորվի: Մեր ազգին հա-
մար ալ տամարեղէն գրկեցէք որ մենք ալ ամե-
նէն յառաջ սորվինք և արիչներ մեզի թող հե-
տեմին:

Անա ըրինք մեր բոլոր անձ ու վախը, պակա-
տութիւններն ու աղէտները, բացէիբաց պատ-
մեցինք Սիգոնի եղբայրացոս Տնն Լէոնարդոյնին,
առանձին իր կողմէ թող գրէ ձեզի պէտք եղածը
և յայտնէ, գրեցինք նաև մեր վերակացու Տէր
ճուլիս Անդոնիս Գարտնաւ Սանդա Սեփրինոս-
յին, որ մեր կողմէն իմացնէ մեզի պէտք եղածը,
կը խնդրենք որ չմտնաք մեզ ձեր մաքրափայլ
աղօթքներուն մէջ:

Գրուեցաւ Սիս քաղաքին մէջ Ռ.Դ = 1585,
Ապրիլ 10, ԾԲ՝ օրը:

Այս գրութիւնը ինչպէս որ տեսանք վերև
ստորագրած են Մարտիրոս եղբւր, Աշտուս, Յով-
հաննէս եղբւր, Չեթուսուս, Դադար եղբւր, Հաշպա,
Մրտըշահ իշխան, և Լիպարիտ իշխան, Աթոռա-
կալք Սոյ, Յանուշ իշխան՝ Աթոռակալ, Միտոսի
Պոտտափորիկի ազա իշխան Սիսի և Տէր Յով-
հաննէս ի Հաշպա, ընկող թէ Ազարիտ յաջորդեց
Խաչատուր կիկլին, որ շատ ձեր ըլլալուն ինքն
խէ իրեն փոխանորդ և յաջորդ կարգեց զայն:

Այսպիսի վկայութիւն մը անհրաժեշտ էր, ու-
րովհետև Լէոնարդո՝ պապին կողմէն պաշտօն
ունէր Խաչատուր Բ. ի հետ բանակցելու, բայց
եբր Սիս եկաւ պապական նուիրակը տեսաւ որ
թէ և ողջ էր ձերանին Խաչատուր, բայց կաթո-
ղիկոսական գործերը յանձնած էր երիտասարդ
Ազարիային, որ նոյն ինքն Լէոնարդոյին աչքե-
րուն առջև կաթողիկոս հուշակուեցաւ Խաչատու-
րին մահէն ետքը:

Ինչպէս կը տեսնուի առ Գրիգոր ԺԲ, պապ
ուղղուած նամակին ամփոփումէն, Ազարիտ հնա-
բաւոր զիջումները ըրած է Վատիկանին՝ անկից
քաղաքականապէս և նիւթապէս օգտուելու յոյ-
սերով, և փորձի համար ալ ո՛չ միայն հայերէն
Ատուսաձառուէ մը աղագրելու առաջարկը ըրած
է պապին, այլ նաև քանի մը աղայ զրկած է որ
կրթութիւն, ի հարկէ այն նախատեսութեամբ որ
անոնք սորվելով արեւոյ լեզուն և ռուսումնասի-
րելով Հռոմի եկեղեցին և պապութիւնը, օգտա-
կար ծառայութիւններ պիտի ընէին Կիլիկիոյ
կաթողիկոսարանին մէջ:

Թէ ի՞նչ կըաւ այս խնդրանքներուն ար-

զիւնքը, այդ մասին լուս է պատմութիւնը, և
այդ լուսութիւնը նշանակալից է ինքնին, այսինքն
Լէոնարդոյի պատմութիւնները Վատիկանի ոյժին
և հնարաւորութեան մասին և ըրած խոստումնե-
րը հարստահարեալ հայութեան մի՛հակը բարեու-
քելու կողմէն, հարկաւ Ազարիային և իր եղբա-
րայաններուն բերնին ջուրերը վազել տալին,
բայց իրականութեան մէջ Վատիկան հայերէն
Ատուսաձառուէ մը խի չըրցաւ աղագրել, և
Անթէղոյի Յովհաննէս եղբւր, և Գրիգոր տարիաւազ
թերևս նոր խոստումներով և եկեղեցական նը-
ուէրներով վերագործան Կիլիկիոյ, չբնաւ հա-
մար բողոքովին ձեռնուեալն և լուսափար:

Ահաւասիկ բոլոր արժէքը և արգիւնքը Ա-
զարիտ Չուղալեցիի Վատիկանի հետ մշակած
յարաբերութիւններուն, և ինչպէս որ կ'երևի,
Ազարիտ հիասթափ իր երազներուն և յոյսերուն
մէջ, այլևս սող մը չգրեց Հռոմ, որովհետև
1585ին Լէոնարդոյի ներկայութեամբ գրուած քա-
նի մը թուղթերէն զատ, որոնց մասին խօսե-
ցանք վերև, բան մը չէ գրուած, որովհետև եթէ
գրուած ըլլային, ատոնք ալ, իրական թէ կեղծ,
մատուցի պէս պիտի պահուէին Վատիկանի մա-
տենագարանին մէջ, իբրև պատմական փաստեր
ծառայելու օր մը Պալմանի նման պատմու-
թիւն գրողներուն՝ Հայոց և Հռոմի եկեղեցիներ-
ուն յարաբերութեան մասին:

Այս գիտողութիւնները փակելու համար ան-
գամ մըն ալ ուշադրութիւն կը հրաւերենք Լէո-
նարդոյի տեղեկագրին վրայ, վասն զի այն բան-
գէտ նուիրակը շատ լաւ թափանցեր է հայ մո-
ղովուրդին քաղաքական անուելի վիճակին և
Հայոց հոգեբանութեան՝ մատը ուղղակի դնելով
վերջին կամ պէտքին վրայ և երկու խօսքով
բանաձևած է, այս մողովուրդը կաթողիկ կ'ըլ-
լայ, եթէ Հռոմ կրնայ ազատել զինքն հարստա-
հարութիւններէն կամ Ազարիայի բառով՝ «ար-
նանկութեանէն»:

Բ. Ե.

Ձ Ա Տ Բ Կ Ը

Գարուն և Կեանքիս. ծաղկունք են հագուեր
նիշաներն իրենց, ծիսականերն բիւր-
Լոյսեր կը հուսին աշխարհէն վարդ.
Թափուր յիւսին շուրջ կ'երգեն փրկչակներ:

Կու լայ, կը սրգայ կառափնաւք շուր,
Յիշուած վարպարչիկ Տանարիկ շքեղ
Պատմիկ և եղած Մանուսի դժոխութիւն.
«Ձէ՛ սաս» - Կեանք կ'երգէ Գերեզմանի քափուր:

«Չասիկ է» կ'երգեն Լոյսն 'ը Աննանուրիսն,
Համարչիկ կ'երգէ զարմեկը Կեանքիս.
Դ՛ւ արիւնով կարմիր Յարրոյիկն հրգոր
Մըքուածներ՝ կ'երգեն. — «Օրննա՛յ Յարուրիսն»:

* * *